«Ռուս-Հայկական համալսարան» բարձրագույն կրթության միջպետական
կրթական կազմակերպություն

Հաստատում եմ՝
Իրավունքի ինստիտուտի տնօրեն
Քալաշյան Մ.Ա._____
«23» հունիսի 2026 թ.

Ինստիտուտ՝ Իրավունքի
Ամբիոն՝ Իրավունքի տեսության և Սահմանադրական իրավունքի

Հեղինակ՝ ի.գ.դ., պրոֆեսոր Ղամբարյան Ա.Ս.

# ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ Պետության և իրավունքի տեսություն (1-ին կիսամյակ)

Մասնագիտություն՝ 042101.00.6 «Իրավագիտություն»

Կրթական ծրագիր՝ 042101.01.6 «Իրավագիտություն»

# Բովանդակությունը


**1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ..... 4**

1.1. ՏՎՅԱԼ ԱՌԱՐԿԱՅԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ..... 4

1.2. ԾԱՎԱԼԸ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԿՐԵԴԻՏՆԵՐՈՎ և ԺԱՄԵՐՈՎ ..... 4

1.3. ԱՌԱՐԿԱՅԻ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ (ՈՒՂՂՈՒԹՅԱՆ) ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ԱՅԼ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՀԵՏ ..... 5

1.4. ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾՐԱԳՐԻ ՅՈՒՐԱՅՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ..... 5

**2. ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ..... 8**

2.1. ՆՊԱՏԱԿԸ և ԽՆԴԻՐՆԵՐԸ ..... 8

2.2. ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼԸ և ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁևԵՐԸ ..... 9

2.3. ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆ ..... 9

2.4. ԴԱՍԸՆԹԱՑԻ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ..... 10

*Թեմա 1. Պետության և իրավունքի տեսության օբյեկտը, առարկան և մեթոդաբանությունը ..... 10*

*Թեմա 2. Պետության և իրավունքի ծագումը ..... 11*

*Թեմա 3. Պետության և իրավունքի տիպաբանությունը ..... 11*

*Թեմա 4. Պետության հասկացությունը, էությունը և հատկանիշները ..... 12*

*Թեմա 5. Պետության գործառույթները ..... 12*

*Թեմա 6. Պետության ձևը և նրա բաղադրիչ տարրերը ..... 13*

*Թեմա 7. Պետության մեխանիզմը (ապարատը) ..... 13*

*Թեմա 8. Քաղաքական համակարգ ..... 14*

*Թեմա 9. Պետությունը, իրավունքը և տնտեսությունը ..... 14*

*Թեմա 10. Իրավական պետություն և քաղաքացիական հասարակություն ..... 14*

*Թեմա 11. Անձի իրավական կարգավիճակը ..... 15*

**3. ՏԵՍԱԿԱՆ ԲԼՈԿ ..... 15**

3.1. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՆՅՈՒԹԵՐԸ ..... 16

*3.1.1. Դասագիրք(եր) ..... 16*

*3.1.2. Մենագրություններ, բրոշյուրներ, հոդվածներ ..... 16*

*3.1.3. Ուսումնական ձեռնարկ(ներ) ..... 17*

*3.1.4. Դասընթացի ուսումնական ծրագրի յուրացման համար անհրաժեշտ այլ նյութեր (նորմատիվ բազա) ..... 17*

**4. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ..... 18**

4.1. ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՑԱՆԿԸ ..... 18

4.2. ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ և ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ..... 19

*4.2.1. Վերլուծական կարողություններ ..... 19*

*4.2.2. Իրավական փաստարկում ..... 20*

*4.2.3. Պետության տեսական հիմունքների իմացություն ..... 21*

*4.2.4. Հստակություն և ընկալելիություն ..... 21*

*4.3.5. Համակարգվածություն և կառուցվածքայնություն ..... 22*

4.3. ՍՏՈՒԳՈՂԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ և ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱՅԼ ՆՅՈՒԹԵՐԻ ՏԻՊԱՅԻՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ ..... 22

*4.3.1. Սեմինար պարապմունքների ժամանակ վերլուծական քննարկման հարցեր (ըստ թեմաների) ..... 22*

Թեմա 1. Պետության և իրավունքի տեսության օբյեկտը, առարկան և մեթոդաբանությունը ..... 23

Թեմա 2. Պետության և իրավունքի ծագումը ..... 23

Թեմա 3. Պետության և իրավունքի տիպաբանությունը ..... 23

Թեմա 4. Պետության հասկացությունը, էությունը և հատկանիշները ..... 23

Թեմա 5. Պետության գործառույթները ..... 23

Թեմա 6. Պետության ձևը և նրա բաղադրիչ տարրերը ..... 24

Թեմա 7. Պետության մեխանիզմը (ապարատը) ..... 24
Թեմա 8. Հասարակության քաղաքական համակարգը ..... 25
Թեմա 9. Պետությունը, իրավունքը և տնտեսությունը ..... 26
Թեմա 10. Իրավական պետություն և քաղաքացիական հասարակություն ..... 26
Թեմա 11. Անձի իրավական կարգավիճակը ..... 27
*4.3.2. Էսսեների, ռեֆերատների, վերլուծական աշխատանքների թեմաներ ..... 27*
*4.3.3. Ստուգարքի օրինակելի հարցեր (տոմս) ..... 29*
4.4. ՄԵԹՈԴԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ, ՈՐՈՆՔ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ ..... 32
*4.4.1. Գիտելիքների ընթացիկ հսկողության ձևերը ..... 32*
*4.4.2. Ատեստավորման ձևը (ստուգարք, քննություն) ..... 32*
*4.4.3. Գնահատման ընթացակարգը ..... 33*
*4.4.4. Գնահատման չափանիշներ ..... 33*
*4.4.5. Ուսանողների նախապատրաստման առաջարկություններ ..... 33*

## 1. Ներածություն

*1.1. Տվյալ առարկայի բովանդակության համառոտ նկարագրությունը*

«Պետության և իրավունքի տեսություն» առարկան պատկանում է բակալավրիատի ուսումնական պլանի 1-ին բլոկի «Առարկաներ (մոդուլներ)» պարտադիր մասին:

«Պետության և իրավունքի տեսությունը» իրավաբանական առարկաների համակարգում հանդիսանում է հիմնարար և մեթոդաբանական գիտություն: Հաշվի առնելով «Պետության և իրավունքի տեսության» հիմնարար բնույթը՝ անհրաժեշտ է հաշվի առնել «Պետության և իրավունքի տեսության» կապերը ոչ միայն ճյուղային իրավաբանական գիտությունների, այլև փիլիսոփայության, սոցիոլոգիայի, տնտեսական, պատմական և քաղաքական գիտությունների հետ:

Տվյալ առարկայի ուսումնասիրության հիմնական նպատակներն են պետաիրավական երևույթների վերաբերյալ ընդհանուր գիտելիքների յուրացումը, պետության և իրավունքի առաջացման, գործունեության և զարգացման էությունն ու օրինաչափություններն արտացոլող հիմնական կատեգորիաների վերաբերյալ պատկերացումների ձևավորումը, ինչպես նաև իրավաբանի հետագա գործնական գործունեության համար ընդհանուր տեսական գիտելիքների կարևորության գիտակցումը:

«Պետության և իրավունքի տեսություն» դասընթացը նվիրված է այնպիսի պետաիրավական երևույթների առաջացմանն ու զարգացմանը, ինչպիսիք են պետության և պետական իշխանության էությունը, պետությունների տեսակների հարաբերակցության ուսումնասիրությունը, պետության տեղն ու դերը հասարակության քաղաքական համակարգում, իրավական պետության հասկացության, նշանների և սկզբունքների սահմանումը:

Առաջին կիսամյակի ընթացքում ուսումնասիրվում է պետության տեսությունը՝ հասկացությունը, էությունը, գործառույթները, ձևերը, պետության մեխանիզմը, քաղաքական համակարգը, իրավական և սոցիալական պետությունը, քաղաքացիական հասարակությունը, անձի իրավական կարգավիճակը, ինչպես նաև պետության տնտեսական հիմքերը և եկեղեցին՝ որպես քաղաքական համակարգի սուբյեկտ:

Դասընթացի բովանդակությունը մշակված է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 30.11.2021 թ. 50-Լ հրամանով հաստատված «Իրավագիտություն» որակավորումների ոլորտային շրջանակի բնութագրերին համապատասխան:

*1.2. Ծավալը ակադեմիական կրեդիտներով և ժամերով*

Առարկայի ծավալը՝ 180 ժամ, կրեդիտ՝ «5» ECTS:

*1.3. Առարկայի փոխկապակցվածությունը մասնագիտության (ուղղության) ուսումնական պլանի այլ առարկաների հետ*

«Պետության և իրավունքի տեսություն» դասընթացը գտնվում է տրամաբանական և բովանդակային կապի մեջ այնպիսի առարկաների հետ, ինչպիսիք են «Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմությունը», «Հայաստանի պետության և իրավունքի պատմությունը», «Իրավական ուսմունքների պատմությունը» և այլն:

Առարկան նախորդող է իրավաբանական մասնագիտության բոլոր պրոֆիլային առարկաների համար:

*1.4. Դասընթացի ծրագրի յուրացման արդյունքները*

Դասընթացի յուրացման արդյունքում ուսանողը պետք է.

**Իմանա.**

1. Պետության և իրավունքի տեսության օբյեկտը, առարկան, գիտությունների համակարգում տեղը, ինչպես նաև դիալեկտիկական, ընդհանուր գիտական (վերլուծություն, սինթեզ, ինդուկցիա, դեդուկցիա, համակարգային մոտեցում) և հատուկ իրավաբանական (ձևական-իրավաբանական, համեմատական-իրավական, սոցիոլոգիական, վիճակագրական, իրավական մոդելավորման) մեթոդների բովանդակությունը:
2. Պետության և իրավունքի ծագման նախադրյալները, պատճառներն ու հիմնական օրինաչափությունները, ինչպես նաև առավել տարածված տեսությունները (աստվածաբանական, հայրապետական, պայմանագրային (բնական-իրավական), օրգանական, մատերիալիստական (դասակարգային), բռնության, իրռիգացիոն և այլն):
3. Պետության և իրավունքի տիպաբանության չափանիշները, ֆորմացիոն և քաղաքակրթական մոտեցումները, պատմական տիպերը (ստրկատիրական, ֆեոդալական, բուրժուական (կապիտալիստական), սոցիալիստական), ինչպես նաև լիբերտար-իրավական և այլ մոտեցումների առանձնահատկությունները:
4. Պետության հասկացությունը, էությունը (դասակարգային, հանրասոցիալական, կրոնական, ազգային, ռասայական մոտեցումներով), հատկանիշները (հանրային իշխանություն, ինքնիշխանություն), իշխանության տարանջատման սկզբունքը, ինչպես նաև պետության ներքին (տնտեսական, քաղաքական, սոցիալական, իրավապահպան, էկոլոգիական) և արտաքին (պաշտպանական, տնտեսական ինտեգրման, համագործակցության) գործառույթների դասակարգումը, դրանց իրականացման ձևերն ու մեթոդները:
5. Պետության ձևի տարրերը՝ կառավարման ձևերը (միապետություն՝ բացարձակ, դուալիստական, խորհրդարանական. հանրապետություն՝ նախագահական, խորհրդարանական, խառը), տարածքային կառուցվածքի ձևերը (ունիտար, դաշնային՝ համաչափ, անհամաչափ, ազգային, տարածքային,

ազգատարածքային. կոնֆեդերացիա), քաղաքական ռեժիմները (ժողովրդավարական, տոտալիտար, ավտորիտար):

6. Պետական մեխանիզմի (ապարատի) կառուցվածքը, պետական մարմինների դասակարգումը (օրենսդիր, գործադիր, դատական, վերահսկողական), դրանց կազմակերպման սկզբունքները (ժողովրդավարություն, օրինականություն, պրոֆեսիոնալիզմ, կոլեգիալություն և միանձնյա ղեկավարում), ինչպես նաև պետական և համայնքային ծառայության տեսակները:

7. Քաղաքական համակարգի ինստիտուցիոնալ, նորմատիվ, հաղորդակցային, մշակութա-գաղափարախոսական ենթահամակարգերը, հիմնական սուբյեկտները (պետություն, քաղաքական կուսակցություններ, հասարակական միավորումներ, ՀԼՄ-ներ, եկեղեցի), ինչպես նաև պետության առանցքային դերն ու տեղը քաղաքական համակարգում:

8. Տնտեսական համակարգերի (պլանային, շուկայական, խառը) տեսակները, պետության կողմից տնտեսության կարգավորման ձևերն ու սահմանները, հրապարակային և մասնավոր իրավունքի հարաբերակցությունը տնտեսական հարաբերություններում, «իրավունք և տնտեսություն» ուղղության առարկան ու մեթոդները, իրավական նորմերի արդյունավետության տնտեսական վերլուծությունը, ինչպես նաև խաղերի տեսությունը և անբարեխիղճ վարքագծի (moral hazard) ռիսկի հաղթահարման իրավական միջոցները:

9. Իրավական և սոցիալական պետության, քաղաքացիական հասարակության հասկացությունները, էությունը, բնորոշ հատկանիշներն ու երաշխիքները, իրավունքի գերակայության և օրենքի գերակայության սկզբունքների հարաբերակցությունը, ինչպես նաև պետական իշխանության ինքնասահմանափակման մեխանիզմները:

10. Անձի իրավական կարգավիճակի կառուցվածքը, «անձ», «մարդ», «քաղաքացի», «օտարերկրացի», «քաղաքացիություն չունեցող անձ» հասկացությունների փոխհարաբերությունը, իրավական կարգավիճակի տեսակները (ընդհանուր (սահմանադրական), հատուկ (տեսակային), անհատական):

11. Մարդու հիմնական իրավունքների և ազատությունների դասակարգումը (ըստ գործունեության ոլորտի՝ անձնական (քաղաքացիական), քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային. ըստ առաջացման ժամանակի՝ սերունդներ. ըստ իրականացման եղանակի՝ անհատական և կոլեկտիվ. դրական և ժխտական), դրանց սահմանափակման հիմքերն ու չափորոշիչները (համաչափության սկզբունք), ինչպես նաև սուբյեկտիվ իրավունքից հրաժարվելու հասկացությունը, տեսակները (պետականորեն ճանաչված, իրացումից հրաժարում, միջամտության համաձայնություն, հակահիրավական արարքով (forfeiture by wrongdoing)), էստոպելի կանոնը, ինչպես նաև մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների երաշխիքները:

**Կարողանա.**

1. Վերլուծել պետահիրավական երևույթները՝ կիրառելով պետության և իրավունքի տեսության մեթոդաբանությունը (դիալեկտիկական, ընդհանուր գիտական և հատուկ իրավաբանական մեթոդներ):

2. Տարանջատել պետության և իրավունքի ծագման տարբեր տեսությունները, գնահատել դրանց կիրառելիությունը և տարբերակել պետության զարգացման արևելյան (ասիական) և արևմտյան (եվրոպական) ուղիները՝ ելնելով կոնկրետ պատմական, տնտեսական, աշխարհագրական, կրոնական և այլ գործոններից:

3. Վերլուծել և համեմատել պետությունների տարբեր պատմական տիպերը, գնահատել ֆորմացիոն և քաղաքակրթական մոտեցումների առավելություններն ու թերությունները, ինչպես նաև բացահայտել տիպերի փոփոխման օրինաչափություններն ու անցման ձևերը:

4. Որակել պետության ձևը (կառավարման ձև, տարածքային կառուցվածք, քաղաքական ռեժիմ)՝ հիմնվելով կոնկրետ պետության բնութագրերի վրա, և վերլուծել դրանց տարրերի փոխկապակցվածությունը:

5. Տարանջատել պետական մարմինների տեսակները, վերլուծել դրանց կազմակերպման և գործունեության սկզբունքները, ինչպես նաև գնահատել պետական մեխանիզմի արդյունավետությունը:

6. Բացահայտել քաղաքական համակարգի տարբեր սուբյեկտների (պետություն, կուսակցություններ, ՀԿ-ներ, ԶԼՄ-ներ, եկեղեցի) դերն ու փոխազդեցությունը, վերլուծել քաղաքական ռեժիմների ազդեցությունը քաղաքական համակարգի բնույթի վրա:

7. Վերլուծել իրավունքի ազդեցությունը տնտեսական հարաբերությունների վրա, գնահատել իրավական նորմերի արդյունավետությունը տնտեսական վերլուծության տեսանկյունից, բացահայտել անբարեխիղճ վարքագծի (moral hazard) ռիսկերը և առաջարկել դրանց հաղթահարման իրավական միջոցներ:

8. Տարբերակել իրավական և սոցիալական պետության առանձնահատկությունները, վերլուծել դրանց ձևավորման նախադրյալները, գնահատել քաղաքացիական հասարակության դերը իրավական պետության կայացման գործում, ինչպես նաև վերլուծել պետության և անձի փոխադարձ պատասխանատվությունը:

9. Որոշել անձի իրավական կարգավիճակի տարրերը, դասակարգել իրավունքներն ու ազատությունները, հիմնավորել դրանց սահմանափակման համաչափությունը, որակել իրավունքից հրաժարվելու ձևերը և էստոպելի կիրառման դեպքերը, ինչպես նաև վերլուծել իրավունքների երաշխիքների համակարգը:

**Ունակ լինի (տիրապետի).**

1. Պետաիրավական երևույթների վերաբերյալ դոկտրինալ աղբյուրների, օրենսդրության (ներառյալ Հայաստանի Հանրապետության) և իրավակիրառ պրակտիկայի քննադատական վերլուծության, ինչպես նաև տարբեր տեսական մոտեցումները համադրելու և գնահատելու հմտություններին:

2. Իրավաբանական փաստարկման, տրամաբանորեն հիմնավորված դատողություններ անելու, դիրքորոշումը բանավոր (սեմինարներ, քննարկումներ) և գրավոր (շարադրություններ, վերլուծական հարցեր, իրավիճակային խնդիրներ) ձևակերպելու, ինչպես նաև հակափաստարկներ առաջ քաշելու հմտություններին:

3. Պետության ձևի, գործառույթների, մեխանիզմի, քաղաքական համակարգի, ինչպես նաև անձի իրավական կարգավիճակի վերաբերյալ տեսական գիտելիքները համակարգելու և գործնական իրավիճակային խնդիրների լուծման համար արդյունավետ կիրառելու հմտություններին:

4. Իրավական նորմերի և պետաիրավական ինստիտուտների համեմատական-իրավական վերլուծության, ինչպես նաև իրավունքի զարգացման հիմնական միտումները (իրավական կիբեռնետիկա, իրավական սոմատոլոգիա, իրավական գերոնտոլոգիա և այլն) կանխատեսելու հմտություններին:

5. Մասնագիտական բարեվարքության (էթիկայի) կանոններին հետևելու, կոռուպցիոն ռիսկերը բացահայտելու և դրանց նկատմամբ անհանդուրժող վերաբերմունք դրսևորելու, ինչպես նաև բազմամշակութային միջավայրում սոցիալական տարբեր խմբերի հետ արդյունավետ համագործակցելու և այլ անձանց իրավական զարգացմանը նպաստելու հմտություններին:

6. Ինքնուրույն ուսումնասիրելու օրենսդրության փոփոխությունները, իրավական գրականությունը, ինքնակրթվելու և մասնագիտական որակավորումը շարունակաբար բարձրացնելու, հարափոփոխ բազմամշակութային աշխատանքային միջավայրում ինտեգրվելու, ինչպես նաև տեսական հետազոտությունների համար գիտական մեթոդներ կիրառելու նախնական հմտություններին:

## 2. Առարկայական ծրագիրը

### *2.1. Նպատակը և խնդիրները*

**Առարկայի նպատակը**

Առարկայի դասավանդման նպատակն է ուսանողների կողմից պետության և իրավունքի բնույթի ու էության, ինչպես նաև պետության և իրավունքի հիմնական կատեգորիաների վերաբերյալ անհրաժեշտ տեսական գիտելիքների ձեռք բերումը՝ ճյուղային և այլ իրավաբանական առարկաների հետևողական յուրացման համար, հասարակության պետաիրավական կյանքի առավել ընդհանուր զարգացման միտումների և օրինաչափությունների վերաբերյալ գիտելիքների փոխանցումը՝ ուսանողների մոտ իրավաբանի ժամանակակից աշխարհայացքի, ընդհանուր իրավական մշակույթի և իրավական մտածողության ամուր հիմքի ձևավորման նպատակով:

**Առարկայի խնդիրները**

- Պետության և իրավունքի տեսության հիմնական կատեգորիաների և հասկացությունների վերաբերյալ գիտելիքների ձևավորումը.
- Պետության և իրավունքի առաջացման, զարգացման և գործունեության օրինաչափությունների ուսումնասիրությունը.
- Ուսանողների մոտ ռուսական պետության և իրավունքի ձևավորման, զարգացման և ժամանակակից վիճակի գնահատման հմտությունների ձևավորումը.
- Իրավական ոլորտում տեղի ունեցող գործընթացները վերլուծելու կարողությունների ձևավորումը:

*2.2. Դասընթացի ծանրաբեռնվածության ծավալը և ուսումնական աշխատանքի ձևերը*

Դասընթացը ներառված է «Հիմնական մասնագիտական դասընթացների կրթաբլոկում» 5 ակադեմիական կրեդիտ (180 ակադեմիական ժամ) աշխատատարությամբ, որից 32 ակադեմիական ժամ նախատեսվում է գործնական պարապմունքների համար: Դասընթացը նախատեսվում է ուսումնասիրել 1 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում:

| **Ուսումնական աշխատանքի տեսակները** | **Ընդամենը, ակադ. ժամեր** |
|---|---|
| **1. Առարկայի ուսումնասիրման ընդհանուր աշխատատարությունն, այդ թվում՝** | **180** |
| 1.1. Լսարանային պարապմունքներ, այդ թվում՝ | **64** |
| 1.1.1. Դասախոսություններ | **32** |
| 1.1.2. Գործնական պարապմունքներ, այդ թվում՝ | **32** |
| 1.1.2.1. Ստուգողական աշխատանքներ | |
| 1.2. Ինքնուրույն աշխատանք, այդ թվում՝ | |
| 1.2.1. Քննություններին նախապատրաստում | |
| 1.2.2. Ինքնուրույն աշխատանքի այլ տեսակներ, այդ թվում՝ (նշել) | **80** |
| 1.2.2.1. Գրավոր ինքնուրույն աշխատանքներ | |
| 1.2.2.2. Էսսե և ռեֆերատներ | |
| Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք) | **քննություն** |

*2.3. Թեմատիկ պլան*

Դասընթացի ծավալի բաշխում (ակադեմիական ժամերով) ըստ թեմաների և ուսումնական աշխատանքի տեսակների

| **Առարկայի բաժինները և թեմաները** | **Ընդամենը** | **Դասախոսություններ** | **Գործնական / սեմինար պարապմունքներ** |
|---|---|---|---|
| **1** | **2=3+4** | **3** | **4** |
| Թեմա 1. Պետության և իրավունքի տեսությունը որպես գիտություն: Պետության և իրավունքի տեսության առարկան և մեթոդը: | **4** | **2** | **2** |

| | | | |
|---|---|---|---|
| Թեմա 2.<br>Պետության և իրավունքի ծագումը: | **8** | **4** | **4** |
| Թեմա 3<br>Պետության տիպաբանությունը: | **4** | **2** | **2** |
| Թեմա 4.<br>Պետության հասկացությունը, էությունը և հատկանիշները: | **4** | **2** | **2** |
| Թեմա 5.<br>Պետության գործառույթները: | **8** | **4** | **4** |
| Թեմա 6.<br>Պետության ձևը և բաղադրիչները | **8** | **4** | **4** |
| Թեմա 7.<br>Պետության մեխանիզմը (ապարատը) | **8** | **4** | **4** |
| Թեմա 8.<br>Քաղաքական համակարգը | **4** | **2** | **2** |
| Թեմա 9.<br>Պետությունը, իրավունքը և տնտեսությունը: | **4** | **2** | **2** |
| Թեմա 10.<br>Իրավական պետություն և քաղաքացիական հասարակություն | **8** | **4** | **4** |
| Թեմա 11.<br>Անձի իրավական կարգավիճակը | **4** | **2** | **2** |
| Ընդամենը | **64** | **32** | **32** |

*2.4. Դասընթացի բաժինների համառոտ բովանդակությունը*

*Թեմա 1. Պետության և իրավունքի տեսության օբյեկտը, առարկան և մեթոդաբանությունը*

Պետության և իրավունքի տեսության օբյեկտի և առարկայի ընդհանուր բնութագիրը: Պետության և իրավունքի տեսության տեղը իրավաբանական գիտությունների համակարգում և հասարակական գիտությունների համակարգում: Պետության և իրավունքի տեսության հարաբերակցությունը փիլիսոփայության, տնտեսագիտության և քաղաքագիտության հետ: Պետության և իրավունքի տեսությունը որպես իրավաբանական գիտության հիմնարար ճյուղ և որպես մեթոդաբանական գիտություն: Իրավունքի փիլիսոփայության և իրավունքի տեսության հարաբերակցությունը: Իրավունքի սոցիոլոգիայի և իրավունքի տեսության հարաբերակցությունը: Հասարակության զարգացման ներկա փուլում պետության և իրավունքի տեսության նպատակներն ու խնդիրները: Իմացաբանական

(ճանաչողական), մեթոդաբանական, էվրիստիկական, գործնական-կազմակերպչական, գաղափարախոսական, դաստիարակչական և կանխատեսողական գործառույթները: Իրավաբանական գիտության զարգացման նոր միտումները՝ իրավական կիբեռնետիկա, իրավական սոմատոլոգիա, իրավական գերոնտոլոգիա և այլն: Պետության և իրավունքի տեսության մեթոդաբանությունը: Պետության և իրավունքի տեսության մեթոդների հասկացությունը և դասակարգումը: Դիալեկտիկական մեթոդը որպես ճանաչողության համընդհանուր մեթոդ: Ընդհանուր գիտական մեթոդները (վերլուծություն, սինթեզ, ինդուկցիա, դեդուկցիա, համակարգային մոտեցում և այլն): Մասնավոր գիտական (հատուկ) մեթոդները՝ ձևական-իրավաբանական, համեմատական-իրավական, սոցիոլոգիական, վիճակագրական, իրավական մոդելավորման մեթոդ և այլն: Ներկա փուլում պետության և իրավունքի տեսության մեթոդաբանության զարգացման հիմնական միտումները:

*Թեմա 2. Պետության և իրավունքի ծագումը*

Տոհմացեղային կարգով պարզունակ հասարակությունում սոցիալական իշխանության և սոցիալական նորմերի առանձնահատկությունը: Պետության առաջացման սոցիալ-տնտեսական, քաղաքական և հոգևոր նախադրյալներն ու պատճառները: Պետության և իրավունքի ծագման հիմնական օրինաչափություններն ու առավել տարածված տեսությունները: Աստվածաբանական, հայրապետական, պայմանագրային (բնական-իրավական), օրգանական, մատերիալիստական (դասակարգային), բռնության, իրռիգացիոն և այլ տեսությունների ընդհանուր բնութագիրը: Տարբեր ժողովուրդների մոտ պետության առաջացման առանձնահատկությունները, պետության առաջացման արևելյան (ասիական) և արևմտյան (եվրոպական) ուղիների առանձնահատկությունը, դրանց կախվածությունը կոնկրետ պատմական պայմաններից, տնտեսական, աշխարհագրական, կրոնական և այլ գործոններից: Իրավունքի առաջացման առանձնահատկությունները՝ իրավունքի ձևավորման ուղիները (սովորույթների պատժում, դատական պրակտիկա, իրավաստեղծում):

*Թեմա 3. Պետության և իրավունքի տիպաբանությունը*

Պետության և իրավունքի տիպաբանության հասկացությունը, պետության և իրավունքի տիպաբանության հիմքում ընկած չափանիշները: Պետությունների տիպաբանության ֆորմացիոն և քաղաքակրթական մոտեցումները՝ տվյալ մոտեցումների առավելություններն ու թերությունները: Պետության պատմական տիպերը՝ ստրկատիրական, ֆեոդալական, բուրժուական (կապիտալիստական), սոցիալիստական: Ֆորմացիոն և քաղաքակրթական մոտեցումների հարաբերակցությունը: Պետության և իրավունքի տիպաբանության լիբերտար-իրավական մոտեցման առանձնահատկությունը: Պետությունների տիպաբանության այլ մոտեցումներ (թեոկրատական, էթնիկական և այլն): Մեկ տիպի շրջանակներում պետության և իրավունքի տնտեսական հիմքի, ազգային-մշակութային և

հասարակական-իրավական էության առանձնահատկությունները: Տարբեր մոտեցումների շրջանակներում իրավունքի տիպաբանության առանձնահատկությունները: Պետության և իրավունքի տիպերի փոփոխման օրինաչափությունները, մի տիպից մյուսին անցման ձևերը:

*Թեմա 4. Պետության հասկացությունը, էությունը և հատկանիշները*

Պետության՝ որպես հանրային իշխանության հատուկ կազմակերպության հասկացությունը և հիմնական հատկանիշները: Պետական (հանրային) իշխանությունը որպես պետության հիմնական հատկանիշ: Պետական իշխանության լեգալությունը և լեգիտիմությունը: Պետական ինքնիշխանություն՝ հասկացություն, տեսակներ (ներքին և արտաքին), կրողներ: Իշխանությունների տարանջատման սկզբունքը՝ տեսություն և պրակտիկա: Պետական ինքնիշխանության տեսությունը: Պետության սահմանման տարբեր մոտեցումներ (դասակարգային, հանրասոցիալական, քաղաքական-կազմակերպչական, սոցիոլոգիական և այլ մոտեցումներ): Պետությունը որպես հրապարակային իրավունքի սուբյեկտ, հարաբերակցությունը հրապարակային իրավունքի այլ սուբյեկտների հետ: Պետության էության նկատմամբ դասակարգային, հանրասոցիալական, կրոնական, ազգային, ռասայական մոտեցումների համեմատական բնութագիրը: Էլիտաների տեսությունը: Տեխնոկրատական ուսմունքները: «Պլյուրալիստական ժողովրդավարության» տեսությունը: Սոցիալական և իրավական պետության ուսմունքը: «Բարեկեցության պետության» տեսությունը:

*Թեմա 5. Պետության գործառույթները*

Պետության գործառույթների հասկացությունը՝ որպես նրա գործունեության հիմնական ուղղություններ: Պետության գործառույթների պայմանավորվածությունը նրա էությամբ, սոցիալական նշանակությամբ և հիմնական խնդիրներով: Պետության գործառույթների և առանձին պետական մարմինների գործառույթների հարաբերակցությունը: Պետության գործառույթների դասակարգման հիմնախնդիրները՝ դրանց տարբերակման հիմքում ընկած չափանիշների նկատմամբ տարբեր մոտեցումներ: Պետության գործառույթների դասակարգումը՝ ըստ գործունեության ոլորտի (ներքին և արտաքին), ըստ գործողության տևողության (մշտական և ժամանակավոր), ըստ սոցիալական նշանակության (հիմնական և ոչ հիմնական): Ներքին գործառույթները՝ տնտեսական, քաղաքական, սոցիալական, գաղափարախոսական, իրավակարգի պահպանության գործառույթ, էկոլոգիական և այլն: Արտաքին գործառույթները՝ երկրի պաշտպանության գործառույթ, համաշխարհային տնտեսության մեջ ինտեգրման գործառույթ, այլ երկրների հետ համագործակցության գործառույթ՝ գլոբալ խնդիրների լուծման գործում և այլն: Հանրային քաղաքականության իրականացման, անվտանգության ապահովման և սոցիալական ծառայությունների մատուցման պետական գործառույթների առանձնահատկությունը: Պետության գործառույթների իրականացման ձևերն ու մեթոդները: Պետության գործառույթների իրականացման իրավական և

կազմակերպչական ձևերը: Համոզման և հարկադրման, խրախուսման և խթանման մեթոդները:

*Թեմա 6. Պետության ձևը և նրա բաղադրիչ տարրերը*

Պետության ձևի հասկացությունը և նրա բաղադրիչ տարրերը՝ կառավարման ձև, պետական (տարածքային) կառուցվածքի ձև, պետաիրավական (քաղաքական) ռեժիմ: Կառավարման ձև՝ հասկացություն և տեսակներ: Միապետությունը որպես կառավարման ձև: Միապետությունների հասկացությունը, հատկանիշները և տեսակները (բացարձակ, դուալիստական, խորհրդարանական): Հանրապետությունը որպես կառավարման ձև՝ հասկացություն, հատկանիշներ և տեսակներ (նախագահական, խորհրդարանական, խառը): Խառը տիպի հանրապետությունների առանձնահատկությունները: Պետական (տարածքային) կառուցվածքի ձև՝ հասկացություն և տեսակներ: Ունիտար պետություն՝ հասկացություն, հատկանիշներ, տեսակներ: Դաշնային պետություն՝ հասկացություն, հատկանիշներ, տեսակներ (ազգային, տարածքային, ազգատարածքային): Համաչափ (սիմետրիկ) և անհամաչափ (ասիմետրիկ) ֆեդերացիաներ: Կոնֆեդերացիան և միջպետական միավորումների (կոնֆեդերացիայի) այլ ձևեր: Պետության վարչատարածքային բաժանման հիմնական գծերը: Ունիտար պետությունների հասկացությունը, հատկանիշները և տեսակները: Ունիտար պետությունների կազմում ինքնավարությունների տեսակները: Դաշնային պետությունների հասկացությունը և հիմնական հատկանիշները: Համաչափ և անհամաչափ ֆեդերացիաներ: Ազգային, տարածքային և ազգատարածքային ֆեդերացիաներ: Պայմանագրային և սահմանադրական ֆեդերացիաներ: Պետաիրավական (քաղաքական) ռեժիմ՝ հասկացություն և տեսակներ: Ժողովրդավարական ռեժիմի հիմնական գծերը: Հակաժողովրդավարական ռեժիմները և դրանց տարատեսակները: Տոտալիտար և ավտորիտար ռեժիմների տարբերությունները: «Կառավարման ձև», «պետական կառուցվածքի ձև» և «քաղաքական ռեժիմ» հասկացությունների հարաբերակցությունը:

*Թեմա 7. Պետության մեխանիզմը (ապարատը)*

Պետության մեխանիզմի հասկացությունը և կառուցվածքը: «Պետական մեխանիզմ», «պետական ապարատ» և «պետական մարմինների համակարգ» հասկացությունների հարաբերակցության հիմնախնդիրները: Պետական ապարատի հիմնական գծերը: Պետական ապարատի կազմակերպման և գործունեության սկզբունքները՝ ժողովրդավարություն, օրինականություն, պրոֆեսիոնալիզմ, կոլեգիալության և միանձնյա ղեկավարման համադրում, հրապարակայնություն և այլն: Պետական մարմնի հասկացությունը և հատկանիշները: Պետական մարմինը որպես հրապարակային իրավունքի սուբյեկտ: Պետական մարմինների դասակարգումը տարբեր հիմքերով: Ներկայացուցչական (օրենսդիր) մարմիններ: Գործադիր իշխանության մարմիններ: Դատական մարմիններ: Վերահսկողական-հսկողական մարմիններ: Պետական մարմինների դասակարգման այլ չափանիշներ:

Պետական և համայնքային ծառայության հասկացությունը և տեսակները: Հրապարակային ծառայության ընդհանուր տեսությունը՝ հրապարակային ծառայության տեսակները և սկզբունքները:

*Թեմա 8. Քաղաքական համակարգ*

Քաղաքական համակարգի հասկացությունը, կառուցվածքը և գործառույթները: Քաղաքական համակարգի սահմանման լայն և նեղ մոտեցումները: Հասարակության քաղաքական համակարգի ինստիտուցիոնալ, նորմատիվ, հաղորդակցային, մշակութա-գաղափարախոսական և ֆունկցիոնալ ենթահամակարգերը (բաղադրիչները): Քաղաքական հարաբերությունները և քաղաքական ազդեցության միջոցները: Քաղաքական համակարգի հիմնական սուբյեկտները: Պետությունը, քաղաքական կուսակցությունները, հասարակական միավորումները, զանգվածային լրատվության միջոցները, եկեղեցին և քաղաքական համակարգի այլ սուբյեկտները: Քաղաքական համակարգի այլ սուբյեկտների նշանակությունը: Պետության տեղն ու դերը հասարակության քաղաքական համակարգում՝ պետությունը որպես քաղաքական համակարգի առանցք: Քաղաքական համակարգերի դասակարգումը տարբեր հիմքերով (ժողովրդավարական և ավտորիտար, բաց և փակ և այլն):

*Թեմա 9. Պետությունը, իրավունքը և տնտեսությունը*

Տնտեսական համակարգերի հասկացությունը և տեսակները (պլանային, շուկայական, խառը): Պլանային և շուկայական տնտեսության հարաբերակցությունը: Նեոլիբերալ տնտեսական մոդելի առանձնահատկությունները և դրա ազդեցությունը իրավական կարգավորման վրա: Տնտեսության պետական կարգավորումը՝ միջամտության սահմաններն ու ձևերը: Տնտեսական հարաբերությունների կարգավորման գործում հրապարակային և մասնավոր իրավունքի հարաբերակցությունը: Իրավունքի ազդեցությունը տնտեսական զարգացման վրա՝ սեփականության իրավունքների պաշտպանություն, պայմանագրային ազատություն, մրցակցություն: «Իրավունք և տնտեսություն» (law and economics) ուսմունքը՝ առարկա և մեթոդներ: Իրավունքի տնտեսական վերլուծությունը՝ իրավական նորմերի արդյունավետությունը որպես դրանց գնահատման չափանիշ: Խաղերի տեսությունը և դրա կիրառումը տնտեսական հարաբերությունների իրավական կարգավորման մեջ: Moral hazard-ի (անբարեխիղճ վարքագծի ռիսկ) հիմնախնդիրը և դրա հաղթահարման իրավական միջոցները:

*Թեմա 10. Իրավական պետություն և քաղաքացիական հասարակություն*

Քաղաքացիական հասարակություն՝ հասկացություն, կառուցվածք, հատկանիշներ: Իրավական պետության գաղափարի կայացումը և հետագա զարգացումը: Իրավական պետության էությունը: Իրավական պետության բնորոշ գծերը՝ իրավունքի գերակայություն, իշխանությունների տարանջատում, պետության և անձի փոխադարձ պատասխանատվություն, մարդու իրավունքների և ազատությունների առաջնայնություն և այլն: Իրավական պետության ձևավորման

անհրաժեշտ նախադրյալները: Իրավական պետությունում օրենքի գերակայության և իրավունքի գերակայության սկզբունքների հարաբերակցությունը: Իրավական պետությունում պետական իշխանության ինքնասահմանափակումը: Իրավական պետության գործունեության երաշխիքները: Քաղաքացիական հասարակության ինստիտուտի կայացումը: Պետությունը և քաղաքացիական հասարակությունը: Քաղաքացիական հասարակության կառուցվածքը: Սոցիալական պետության հասկացությունը, էությունը: Սոցիալական պետության բնորոշ գծերը: Սոցիալական պետության գաղափարի կայացումը: Սոցիալական պետության ձևավորման անհրաժեշտ նախադրյալները: Սոցիալական պետության գործունեության երաշխիքները: Իրավական և սոցիալական պետության հարաբերակցությունը:

*Թեմա 11. Անձի իրավական կարգավիճակը*

Անձի իրավական կարգավիճակի հասկացությունը և կառուցվածքը: «Անձ», «մարդ», «քաղաքացի», «օտարերկրացի», «քաղաքացիություն չունեցող անձ» հասկացությունների հարաբերակցությունը: Անձի իրավական կարգավիճակի տեսակները՝ ընդհանուր (սահմանադրական), հատուկ (տեսակային), անհատական: Մարդու հիմնական իրավունքների և ազատությունների հասկացությունը: Մարդու իրավունքների համատեքստում սուբյեկտիվ և օբյեկտիվ իրավունքները: Մարդու իրավունքների և քաղաքացու իրավունքների հարաբերակցությունը: Մարդու «իրավունքներ» և «ազատություններ» տերմինների հարաբերակցությունը: Հիմնական իրավունքների ֆունկցիաների տեսությունը՝ status negativus (պետական միջամտությունից պաշտպանության իրավունք), status positivus (պետության դրական գործողությունների իրավունք), status activus (հրապարակային կառավարմանը մասնակցելու իրավունք): Մարդու իրավունքների և ազատությունների դասակարգումը՝ ըստ գործունեության ոլորտի (անձնական (քաղաքացիական), քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային), ըստ առաջացման ժամանակի (իրավունքների սերունդներ), ըստ իրականացման եղանակի (անհատական և կոլեկտիվ), դրական և ժխտական իրավունքներ ու ազատություններ: Մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների սահմանները (սահմանագծերը): Մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակման հիմքերը՝ արտակարգ դրության պայմաններում, սահմանադրական կարգի, բարոյականության, առողջության, այլ անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության, երկրի պաշտպանության և պետության անվտանգության ապահովման նպատակներով: Սահմանափակումների համաչափության (համապատասխանության) սկզբունքը: Սուբյեկտիվ իրավունքից հրաժարումը՝ հասկացություն, իրավաչափության պայմաններ, հրաժարման ձևեր (գործողությամբ, անգործությամբ, համաձայնությամբ), էստոպելի կանոնը: Մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների երաշխիքները:

**3. Տեսական բլոկ**

*3.1. Դասընթացի տեսական մասի նյութերը*

*3.1.1. Դասագիրք(եր)*

1. Իրավունքի ընդհանուր տեսության հիմնախնդիրները. Ուսումնական ձեռնարկ / գիտ. խմբ.՝ Ա.Ս. Ղամբարյան. Երևան: Քոփի Փրինթ, 2024:
2. Պետության և իրավունքի տեսություն / հեղ. խումբ, խմբ. Ա.Ս. Ղամբարյանի և Մ.Ա. Մուրադյանի. – Երևան: Լուսաբաց, 2023:
3. Հովհաննիսյան Գ.Գ. Ընդհանուր իրավագիտություն և իրավական մեթոդաբանություն: դասագիրք. – Երևան, 2020:
4. Венгеров А.Б. Теория государства и права. – М.: Омега-Л, 2019.
5. Марченко М.Н. Теория государства и права: учебник. – 3-е изд. , перераб. и доп. – М.: Проспект, 2012.
6. Морозова Л.А. Теория государства и права: учебник. – 6-е изд. , перераб. и доп. – М.: Норма : ИНФРА-М, 2020.
7. Нерсесянц В.С. Теория права и государства: учебник. – М.: Инфра, 2005.
8. Перевалов В.Д. Теория государства и права: учебник и практикум для вузов. – 5-е изд. , перераб. и доп. – М.: Издательство Юрайт, 2020.
9. Радько Т.Н. Теория государства и права. – М.: Проспект, 2020.
10. Теория государства и права / коллектив авторов, отв. ред. А.В. Малько. – 4-е изд. – М.: КНОРУС, 2012.
11. Теория государства и права / под ред. В.Н. Жукова и Е.А. Фроловой. – М.: Проспект, 2025.
12. Теория государства и права / под ред. М.М. Рассолова. – М.: ЮНИТИ-ДАНА, 2020.

*3.1.2. Մենագրություններ, բրոշյուրներ, հոդվածներ*

1. Ղամբարյան Ա.Ս. Հայաստանի անկախության մասին հռչակագիրը. պետականապահպանության անանց երաշխիք» // Բանբեր արդարադատության ակադեմիայի, 2020, № 2 (4), էջեր 30-40:
2. Ղամբարյան Ա.Ս. Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ նախատեսված մարմինները և սահմանադրական մարմինները: մենագրություն. – Երևան, 2023. – 60 էջ:
3. Ղամբարյան Ա.Ս. Հայոց պետականության պահպանման սահմանադրաիրավական ուղիները. – Երևան: Տիգրան Մեծ, 2022. – 90 էջ:
4. Ղամբարյան Ա.Ս. Վստահության հարաքվե կազմակերպելու ՀՀ սահմանադրական դատարանի առաջարկը և քաղաքական իշխանության՝ ինքնասահմանադրականացման բաց թողնված հնարավորությունը // Հայ-ռուսական համալսարանի Լրաբեր (հումանիտար և հասարակական գիտություններ). – 2021. – № 3 (39). – էջ 84–96:
5. Алексеев С.С. Теория права. – М.: БЕК, 1994.
6. Байтин М.И. Сущность права. – М.: Право и государство, 2005.
7. Гамбарян А.С. Отказ от права и вопросы уголовно-процессуального вмешательства: монография / науч. ред. проф. А.В. Смирнова. – М.: Юрлитинформ, 2018. – 352 с.
8. Лазарев В.В. Общая теория права и государства. – М.: Юристъ, 2021.

9. Ларенц К., Канарис К.-В. Методология юриспруденции / пер. с нем. К.В. Нама. – М.: М-Логос, 2024. – 357 с.
10. Матузов Н.И., Малько А.В. Теория государства и права. – М.: Юристъ, 2020.

*3.1.3. Ուսումնական ձեռնարկ(ներ)*

1. Ղամբարյան Ա., Ավոյան Ք. Սուբյեկտիվ իրավունքից հրաժարումը և իրավաչափության պայմանները // Օրինականություն. – 2016. – № 91. – էջ 23–33:
2. Ղամբարյան Ա., Ստեփանյան Հ. Պետության և իրավունքի տեսություն (սխեմաներ և իրավիճակային խնդիրներ). ուսումնական ձեռնարկ. Երևան: Տիր, 2024. 303 էջ:
3. Гамбарян А.С. Факторы, влияющие на судебную политику // Международная ассоциация содействия правосудию (МАСП/IUAJ). – URL: http://www.iuaj.net/node/1324 (09.07.2013):
4. Лившиц Р.З. Теория права. – М., 2001.
5. Малько А.В., Соломатин А.Ю. Сравнительное правоведение: учебно-методический комплекс. – М., 2008.
6. Марченко М.Н. Правовые системы современного мира: учебное пособие. – М., 2008.
7. Общая теория государства и права: академический курс в трех томах / отв. ред. М.Н. Марченко. – М., 2007.
8. Проблемы общей теории права и государства: учебник / под общ. ред. акад. В.С. Нерсесянца. – М., 2002.
9. Саидов А.Х. Сравнительное правоведение. – М., 2005.
10. Теория государства и права / под ред. А.С. Пиголкина. – М., 2006.
11. Черданцев А.Ф. Теория государства и права: учебник. – М.: Юрайт-М, 2002.

*3.1.4. Դասընթացի ուսումնական ծրագրի յուրացման համար անհրաժեշտ այլ նյութեր (նորմատիվ բազա)*

1. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր (ընդունվել է 10.12.1948 ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից):
2. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության կոնվենցիա (եզրափակվել է Հռոմում 04.11.1950) (փոփ. և լրաց. 11.05.1994):
3. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր (ընդունվել է 1966 թվականի դեկտեմբերի 16-ի Գլխավոր ասամբլեայի 2200 Ա (XXI) բանաձևով):
4. Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր (ընդունվել է 1966 թվականի դեկտեմբերի 16-ի Գլխավոր ասամբլեայի 2200 Ա (XXI) բանաձևով):
5. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (2015 թվականի դեկտեմբերի 6-ին):
6. Հայաստանի Հանրապետության օրենքը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» (ընդունվել է 2018 թ.):
7. Հայաստանի Հանրապետության Դատական օրենսգիրք (գործող խմբագրությամբ՝ 2026 թ.):

8. Իրավունքի գերակայության պահպանումը գնահատելու համար հարցերի վերահսկման ցանկ, որն ընդունվել է Վենետիկի հանձնաժողովի կողմից 2016 թ. մարտի 11–12-ին. – URL: http://www.concourt.am/armenian/news/doc/CDL-AD(2016)007-ru.pdf

9. Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի 16.04.2003 թ. ՍԴՈ-412 որոշումը «2003 թվականի մարտի 5-ի Հայաստանի Հանրապետության նախագահի ընտրությունների արդյունքների բողոքարկման (վիճարկման) մասին»:

## 4. Գնահատման միջոցները

*4.1. Կարողունակության ցանկը*

Տեղեկատվության որոնում, քննադատական վերլուծություն և սինթեզ իրականացնելու, առաջադրված խնդիրների լուծման համար համակարգային մոտեցում կիրառելու ունակությունը ձևավորվում է 1-ին, 2-րդ և 3-րդ թեմաների շրջանակներում (Պետության և իրավունքի տեսությունը որպես գիտություն, առարկա և մեթոդ. Պետության և իրավունքի ծագումը. Պետության տիպաբանությունը): Այդ կարողունակությունը ստուգվում է սեմինարային հարցերի, ռեֆերատների, վերլուծական հարցերի և քննարկումների միջոցով:

Առաջադրված նպատակի շրջանակներում խնդիրների շրջանակը որոշելու և գործող իրավական նորմերից, առկա ռեսուրսներից ու սահմանափակումներից ելնելով դրանց լուծման օպտիմալ եղանակներն ընտրելու ունակությունը ձևավորվում է 4-րդ և 5-րդ թեմաների շրջանակներում (Պետության հասկացությունը, էությունը և հատկանիշները. Պետության գործառույթները): Այդ կարողունակությունը ստուգվում է խնդիրների (կազուսների), իրավիճակային առաջադրանքների և վերլուծական հարցերի միջոցով:

Սեփական ժամանակը կառավարելու, ողջ կյանքի ընթացքում կրթության սկզբունքների հիման վրա ինքնազարգացման հետագիծ մշակելու և իրականացնելու ունակությունը ձևավորվում է բոլոր թեմաների շրջանակներում: Այդ կարողունակությունը ստուգվում է ինքնուրույն աշխատանքի, ռեֆերատների և էսսեների պատրաստման միջոցով:

Կոռուպցիոն վարքագծի նկատմամբ անհանդուրժող վերաբերմունք ձևավորելու ունակությունը ձևավորվում է 7-րդ և 8-րդ թեմաների շրջանակներում (Պետության մեխանիզմը. Քաղաքական համակարգը): Այդ կարողունակությունը ստուգվում է քննարկումների, վերլուծական հարցերի և իրավիճակային խնդիրների միջոցով:

Իրավունքի ձևավորման, գործունեության և զարգացման հիմնական օրինաչափությունները վերլուծելու ունակությունը ձևավորվում է 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 9-րդ, 10-րդ և 11-րդ թեմաների շրջանակներում (Պետության և իրավունքի տեսությունը որպես գիտություն, առարկա և մեթոդ. Պետության և իրավունքի ծագումը. Պետության տիպաբանությունը. Պետության հասկացությունը, էությունը և հատկանիշները. Պետությունը, իրավունքը և տնտեսությունը. Իրավական պետություն և քաղաքացիական հասարակություն. Անձի իրավական կարգավիճակը):

Այդ կարողունակությունը ստուգվում է սեմինարային հարցերի, քննական հարցերի, թեստային առաջադրանքների և ռեֆերատների միջոցով:

Պետության գործառույթները և լիազորությունները սահմանող իրավական նորմերը կիրառելու ունակությունը ձևավորվում է 5-րդ, 6-րդ և 7-րդ թեմաների շրջանակներում (Պետության գործառույթները. Պետության ձևը և բաղադրիչները. Պետության մեխանիզմը): Այդ կարողունակությունը ստուգվում է խնդիրների (կազուսների), վերլուծական հարցերի և իրավիճակային առաջադրանքների միջոցով:

Տրամաբանորեն ճիշտ, հիմնավորված և հստակ բանավոր ու գրավոր խոսքը միասնական և ճիշտ մասնագիտական իրավաբանական բառապաշարի օգտագործմամբ ձևավորելու ունակությունը ձևավորվում է բոլոր թեմաների շրջանակներում: Այդ կարողունակությունը ստուգվում է ռեֆերատների, էսսեների, վերլուծական հարցերի և սեմինարներին բանավոր պատասխանների միջոցով:

Զարգացած իրավագիտակցության, իրավական մտածողության և իրավական մշակույթի հիման վրա մասնագիտական գործունեություն իրականացնելու ունակությունը ձևավորվում է 4-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ և 11-րդ թեմաների շրջանակներում (Պետության հասկացությունը, էությունը և հատկանիշները. Քաղաքական համակարգը. Պետությունը, իրավունքը և տնտեսությունը. Իրավական պետություն և քաղաքացիական հասարակություն. Անձի իրավական կարգավիճակը): Այդ կարողունակությունը ստուգվում է ռեֆերատների, էսսեների և վերլուծական հարցերի միջոցով:

### *4.2. Կարողության գնահատման ցուցանիշները և չափանիշները*

#### *4.2.1. Վերլուծական կարողություններ*

**A (88–100 միավոր) «Գերազանց».** Ուսանողն առանձնացնում է խնդրի բոլոր էական կողմերը, իրականացնում է ինքնուրույն իրավական վերլուծություն, համեմատում է դոկտրինալ մոտեցումները պետության ծագման, էության, գործառույթների, ձևերի և տիպաբանության վերաբերյալ. բացահայտում է պետական ինստիտուտների զարգացման օրինաչափությունները. վերլուծում է պետական իշխանության լեգիտիմությունն ու լեգալությունը, պետության և տնտեսության փոխհարաբերությունը. ազատորեն կիրառում է status negativus, status positivus, status activus կատեգորիաները:

**B (76–87 միավոր) «Շատ լավ».** Ուսանողը բացահայտում է խնդրի հիմնական կողմերը, վերլուծությունն իրականացնում է ինքնուրույն եզրահանգումների առանձին տարրերով. ընդհանուր առմամբ ճիշտ է որոշում պետության էությունը, գործառույթներն ու ձևերը. ցուցաբերում է ըմբռնում մարդու իրավունքների հիմնական գործառույթների և դրանց կապի իրավունքների սերունդների հետ:

**C (64–75 միավոր) «Լավ».** Ուսանողը ճիշտ է որոշում հիմնական կատեգորիաները, սակայն վերլուծությունը կրում է նկարագրական բնույթ. թույլ է

տալիս առանձին անճշտություններ պետության գործառույթների և ձևերի բնութագրման ժամանակ. դժվարանում է տարբերակել մարդու իրավունքների կարգավիճակային գործառույթները:

**D (52–63 միավոր) «Բավարար».** Ուսանողը վերարտադրում է հիմնական մոտեցումները, սակայն վերլուծությունը մակերեսային է. դժվարանում է պետությունների տիպաբանության, գործառույթների և ձևերի դասակարգման հարցում. չի տարբերակում մարդու իրավունքների գործառույթները:

**E (40–51 միավոր) «Բավարար սահմանային».** Ուսանողը տալիս է երևույթների ընդհանուր բնութագիր, սակայն ինքնուրույն վերլուծություն չի իրականացնում. թույլ է տալիս էական սխալներ կատեգորիաների սահմանման ժամանակ. չի կարող բնութագրել իրավունքների կարգավիճակային գործառույթները:

**FX (20–39 միավոր) «Անբավարար».** Ուսանողը չի կարողանում առանձնացնել խնդրի էական կողմերը, վերլուծությունը բացակայում է կամ կրում է մակերեսային բնույթ. չի տարբերում պետության ձևերն ու գործառույթները. չգիտի կարգավիճակային գործառույթները:

**F (0–19 միավոր) «Անբավարար».** Վերլուծությունն ամբողջությամբ բացակայում է. ուսանողը չի կարող առանձնացնել նույնիսկ պետության տեսության հիմնական կատեգորիաները:

*4.2.2. Իրավական փաստարկում*

**A (88–100 միավոր) «Գերազանց».** Ուսանողը ներկայացնում է մանրամասն իրավական փաստարկում՝ հղումներով դոկտրինին, նորմատիվ ակտերին (ՀՀ Սահմանադրություն, ՀՀ օրենքներ) և պետական պրակտիկայի օրինակներին. հիմնավորում է դիրքորոշումը անձի իրավական կարգավիճակի, իրավունքից հրաժարվելու, իշխանության լեգիտիմության հարցերում. կիրառում է համեմատահիրավական մեթոդ:

**B (76–87 միավոր) «Շատ լավ».** Փաստարկումն ընդհանուր առմամբ հետևողական է, առկա են առանձին հղումներ իրավունքի նորմերին (ՀՀ Սահմանադրություն, օրենքներ) և գիտական մոտեցումներին. բերում է պրակտիկայի օրինակներ:

**C (64–75 միավոր) «Լավ».** Փաստարկումը մասնատված է, դոկտրինին և նորմատիվ ակտերին հղումներ կան, սակայն ոչ միշտ են համապատասխան. օրինակները միշտ չէ, որ արդիական են:

**D (52–63 միավոր) «Բավարար».** Փաստարկումը թույլ է, դոկտրինին հղումները բացակայում են կամ թերի են. նորմատիվ ակտերին հղումները եզակի են:

**E (40–51 միավոր) «Բավարար սահմանային».** Փաստարկումը կրում է ընդհանուր բնույթ՝ առանց կոնկրետ նորմերի կամ դոկտրինի հղումների:

**FX (20–39 միավոր) «Անբավարար».** Փաստարկումը բացակայում է կամ չի համապատասխանում առաջադրված հարցին. ուսանողը չի կարող հիմնավորել սեփական դիրքորոշումը:

**F (0–19 միավոր) «Անբավարար».** Փաստարկումն ամբողջությամբ բացակայում է:

*4.2.3. Պետության տեսական հիմունքների իմացություն*

**A (88–100 միավոր) «Գերազանց».** Ուսանողն ազատորեն կողմնորոշվում է բոլոր հիմնական հասկացություններում՝ պետություն, պետական իշխանություն, ինքնիշխանություն, պետության ձև, պետության գործառույթներ (ներառյալ հանրային քաղաքականության մշակման, հասարակական հարաբերությունների կարգավորման, արդարադատության, իրավակարգի պահպանության, անվտանգության ապահովման, հանրային ծառայությունների մատուցման գործառույթները), պետության մեխանիզմ, քաղաքական համակարգ, իրավական և սոցիալական պետություն, քաղաքացիական հասարակություն, անձի իրավական կարգավիճակ, իրավունքից հրաժարում, լեգիտիմություն. գիտի status negativus, status positivus, status activus տեսությունը և դրանց կապը իրավունքների սերունդների հետ. գիտի պետության տիպաբանության քննարկվող մոտեցումները. գիտի «իրավունք և տնտեսություն» հայեցակարգը:

**B (76–87 միավոր) «Շատ լավ».** Ուսանողը վստահորեն գիտի պետության տեսության հիմնական դրույթները, թույլ է տալիս առանձին անճշտություններ պետության ձևերի, գործառույթների և մեխանիզմի տարրերի սահմանման ժամանակ. գիտի մարդու իրավունքների հիմնական գործառույթները:

**C (64–75 միավոր) «Լավ».** Ուսանողը գիտի հիմնական հասկացությունները, սակայն թույլ է տալիս սխալներ. գիտելիքը մասնատված է. շփոթում է պետության ձևի տարրերը, չի կարող նշել պետության բոլոր հիմնական գործառույթները. չի կարող բնութագրել իրավունքների կարգավիճակային գործառույթները:

**D (52–63 միավոր) «Բավարար».** Ուսանողը վերարտադրում է հիմնական հասկացությունները, սակայն թույլ է տալիս էական սխալներ. չի կարող նշել պետության գործառույթների համակարգը. չի տարբերակում իրավունքների կարգավիճակային գործառույթները:

**E (40–51 միավոր) «Բավարար սահմանային».** Ուսանողը գիտի առանձին հասկացություններ, սակայն չի կարող դրանք համակարգել. չի կարող նշել պետության հատկանիշները, գործառույթներն ու ձևերը:

**FX (20–39 միավոր) «Անբավարար».** Ուսանողը չգիտի պետության տեսության հիմնական հասկացություններն ու կատեգորիաները. չի կարող նշել պետության հատկանիշները, գործառույթներն ու ձևերը:

**F (0–19 միավոր) «Անբավարար».** Գիտելիքն ամբողջությամբ բացակայում է:

*4.2.4. Հստակություն և ընկալելիություն*

**A (88–100 միավոր) «Գերազանց».** Պատասխանը կառուցված է, օգտագործված են ճշգրիտ իրավական հասկացություններ, եզրակացությունները ձևակերպված են պարզ: Ցուցաբերում է ըմբռնում հետևյալ հասկացությունների փոխհարաբերության՝ կառավարման ձև, պետական կառուցվածքի ձև, քաղաքական ռեժիմ. գործառույթ և իրավասություն. լեգիտիմություն և լեգալություն. իրավունքներ և ազատություններ. օբյեկտիվ և սուբյեկտիվ իրավունք:

**B (76–87 միավոր) «Շատ լավ».** Պատասխանը բավականաչափ հասկանալի է, տերմինաբանությունն առավելապես օգտագործվում է ճիշտ. առանձին հասկացություններ կիրառվում են ոչ ճշգրիտ:

**C (64–75 միավոր) «Լավ».** Պատասխանն ընդհանուր է, տերմինաբանությունը միշտ չէ, որ ճշգրիտ է, թույլ են տրվում սխալներ հատուկ տերմինների գործածության մեջ (օրինակ՝ շփոթում է ունիտար և դաշնային պետությունը, խառնում պետության գործառույթներն ու առանձին մարմինների գործառույթները):

**D (52–63 միավոր) «Բավարար».** Պատասխանն անհետևողական է, իրավական տերմինաբանությունն օգտագործվում է սխալ կամ բացակայում է. չի տարբերում հիմնական պետաիրավական հասկացությունները:

**E (40–51 միավոր) «Բավարար սահմանային».** Պատասխանը շփոթեցնող է, տերմինաբանությունը՝ սխալ:

**FX (20–39 միավոր) «Անբավարար».** Պատասխանն անհասկանալի է, տերմինները չեն օգտագործվում:

**F (0–19 միավոր) «Անբավարար».** Պատասխանը բացակայում է:

*4.3.5. Համակարգվածություն և կառուցվածքայնություն*

**A (88–100 միավոր) «Գերազանց».** Պատասխանը տրամաբանորեն կառուցված է, առանձնացված են ներածությունը, հիմնական մասը, եզրակացությունները. նկատվում է համակարգային մոտեցում պետական երևույթների վերլուծության նկատմամբ:

**B (76–87 միավոր) «Շատ լավ».** Պատասխանն ընդհանուր առմամբ տրամաբանական է, կառուցվածքը մասամբ պահպանված է. եզրակացություններն առկա են, սակայն բավարար մանրամասն չեն:

**C (64–75 միավոր) «Լավ».** Խախտված է շարադրման տրամաբանությունը, եզրակացությունները բացակայում են կամ չեն համապատասխանում բովանդակությանը. շարադրանքն անհամակարգ է:

**D (52–63 միավոր) «Բավարար».** Պատասխանն անհամակարգ է, կառուցվածքը բացակայում է. շարադրանքը քաոսային է, չի նկատվում հասկացությունների միջև կապ:

**E (40–51 միավոր) «Բավարար սահմանային».** Կառուցվածքը գրեթե բացակայում է:

**FX (20–39 միավոր) «Անբավարար».** Կառուցվածքը բացակայում է:

**F (0–19 միավոր) «Անբավարար».** Կառուցվածքը բացակայում է:

*4.3. Ստուգողական առաջադրանքների և գիտելիքների գնահատման համար անհրաժեշտ այլ նյութերի տիպային օրինակներ*

*4.3.1. Սեմինար պարապմունքների ժամանակ վերլուծական քննարկման հարցեր (ըստ թեմաների)*

**Թեմա 1. Պետության և իրավունքի տեսության օբյեկտը, առարկան և մեթոդաբանությունը**

1. Ո՞րն է պետության և իրավունքի տեսության օբյեկտը և առարկան:
2. Ի՞նչ տեղ է զբաղեցնում պետության և իրավունքի տեսությունը իրավաբանական և հումանիտար գիտությունների համակարգում:
3. Ի՞նչ գործառույթներ է իրականացնում պետության և իրավունքի տեսությունը:
4. Ի՞նչ է պետության և իրավունքի տեսության մեթոդաբանությունը: Թվարկե՛ք հիմնական մեթոդները:

**Թեմա 2. Պետության և իրավունքի ծագումը**

1. Բնութագրե՛ք հասարակական իշխանությունը և սոցիալական նորմերը տոհմացեղային կարգի պայմաններում:
2. Թվարկե՛ք պետության առաջացման հիմնական նախադրյալները:
3. Բնութագրե՛ք պետության ծագման հիմնական տեսությունները (աստվածաբանական, հայրապետական, պայմանագրային, մատերիալիստական, բռնության տեսություն, իրռիգացիոն և այլն):
4. Ո՞րն է տարբերությունը պետության առաջացման արևելյան (ասիական) և արևմտյան (եվրոպական) ուղիների միջև:

**Թեմա 3. Պետության և իրավունքի տիպաբանությունը**

1. Ի՞նչ է պետության տիպաբանությունը: Ո՞ր չափանիշներն են ընկած դրա հիմքում:
2. Բնութագրե՛ք պետության տիպաբանության ֆորմացիոն մոտեցումը:
3. Բնութագրե՛ք պետության տիպաբանության քաղաքակրթական մոտեցումը:
4. Ո՞րն է պետության տիպաբանության լիբերտար-իրավական մոտեցման առանձնահատկությունը:

**Թեմա 4. Պետության հասկացությունը, էությունը և հատկանիշները**

1. Թվարկե՛ք պետության հիմնական հատկանիշները:
2. Ի՞նչ է պետական (հանրային) իշխանությունը:
3. Ո՞րն է տարբերությունը պետական իշխանության լեգալության և լեգիտիմության միջև:
4. Ի՞նչ է պետական ինքնիշխանությունը:
5. Բնութագրե՛ք պետության էության նկատմամբ տարբեր մոտեցումները (դասակարգային, հանրասոցիալական, կրոնական, ազգային և այլն):
6. Ի՞նչ է էլիտաների տեսությունը և տեխնոկրատական ուսմունքները:

**Թեմա 5. Պետության գործառույթները**

1. Ի՞նչ են պետության գործառույթները: Ինչպե՞ս են հարաբերակցվում «պետության գործառույթներ» և «պետության գործունեություն» հասկացությունները:

2. Որո՞նք են պետության գործառույթների շրջանակի որոշման հիմնական մոտեցումները: Ինչու՞ է անհնար դրանց սպառիչ ցանկը տալը:
3. Բնութագրե՛ք հանրային քաղաքականության մշակման գործառույթը: Ինչու՞ է այն հիմնարար պետության մյուս բոլոր գործառույթների համար:
4. Բացահայտե՛ք հասարակական հարաբերությունների կարգավորման գործառույթի բովանդակությունը: Ինչպե՞ս է այն կապված պետության իրավաստեղծ գործունեության հետ:
5. Ի՞նչ է ներկայացնում արդարադատության իրականացման գործառույթը: Ի՞նչ դեր է այն կատարում պետության գործառույթների համակարգում:
6. Բնութագրե՛ք հասարակական կարգի պահպանության գործառույթը: Պետական ո՞ր մարմիններն են իրականացնում այն:
7. Բացահայտե՛ք ազգային անվտանգության ապահովման գործառույթի բովանդակությունը: Որո՞նք են դրա հիմնական տարրերը (ֆիզիկական և հոգեբանական ասպեկտները):
8. Ի՞նչ է հանրային ծառայությունների մատուցման գործառույթը: Բերե՛ք ժամանակակից պետության կողմից մատուցվող հանրային ծառայությունների օրինակներ:
9. Թվարկե՛ք պետության գործառույթների իրականացման իրավական և կազմակերպչական ձևերը: Ո՞րն է տարբերությունը համոզման և հարկադրման մեթոդների միջև:
10. Ինչպե՞ս են հարաբերակցվում պետության գործառույթները և առանձին պետական մարմինների գործառույթները: Բերե՛ք օրինակներ:

**Թեմա 6. Պետության ձևը և նրա բաղադրիչ տարրերը**

1. Ի՞նչ է պետության ձևը և որո՞նք են նրա տարրերը:
2. Ի՞նչ է կառավարման ձևը: Թվարկե՛ք դրա տեսակները:
3. Բնութագրե՛ք միապետությունը որպես կառավարման ձև (տեսակները՝ բացարձակ, դուալիստական, խորհրդարանական):
4. Բնութագրե՛ք հանրապետությունը որպես կառավարման ձև (տեսակները՝ նախագահական, խորհրդարանական, խառը):
5. Ի՞նչ է պետական (տարածքային) կառուցվածքի ձևը: Թվարկե՛ք դրա տեսակները:
6. Ո՞րն է տարբերությունը ունիտար և դաշնային պետության միջև:
7. Ի՞նչ է կոնֆեդերացիան և միջպետական միավորումների (կոնֆեդերացիան) այլ ձևերը:
8. Ի՞նչ է պետաիրավական (քաղաքական) ռեժիմը: Թվարկե՛ք դրա տեսակները:
9. Բնութագրե՛ք ժողովրդավարական ռեժիմը:
10. Ո՞րն է տարբերությունը տոտալիտար և ավտորիտար ռեժիմների միջև:

**Թեմա 7. Պետության մեխանիզմը (ապարատը)**

1. Ի՞նչ է պետության մեխանիզմը և պետական ապարատը: Ինչպե՞ս են հարաբերակցվում այս հասկացությունները նեղ և լայն իմաստներով:
2. Թվարկե՛ք պետական մեխանիզմի հիմնական հատկանիշները (գծերը), որոնք այն տարանջատում են ոչ պետական կազմավորումներից:
3. Թվարկե՛ք պետական ապարատի կազմակերպման և գործունեության սկզբունքները:
4. Ի՞նչ է պետական մարմինը: Թվարկե՛ք նրա հատկանիշները:
5. Ինչպե՞ս են դասակարգվում պետական մարմինները: (իշխանությունների բաժանման սկզբունքով, լիազորությունների բնույթով, ձևավորման կարգով, կառուցվածքով, տարածքային մասշտաբով)
6. Ո՞րն է իշխանությունների բաժանման սկզբունքի էությունը: Բնութագրե՛ք նրա գործառութային, կառուցակարգային (ինստիտուցիոնալ) և հասցեական ասպեկտները:
7. Բացահայտե՛ք Հայաստանի Հանրապետության պետական մեխանիզմի կառուցվածքը. բնութագրե՛ք ներկայացուցչական (օրենսդիր), գործադիր մարմինները, Նախագահին և դատական մարմինները:
8. Որո՞նք են Հայաստանի Հանրապետությունում դատախազության սահմանադրական կարգավիճակն ու գործառույթները:
9. Բնութագրե՛ք քննչական մարմինները և նրանց լիազորությունները՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության:
10. Ի՞նչ է հրապարակային ծառայությունը: Թվարկե՛ք դրա տեսակները:
11. Թվարկե՛ք պետական պաշտոնների տեսակները (քաղաքական, վարչական, ինքնավար, հայեցողական) և բացահայտե՛ք դրանց առանձնահատկությունները:
12. Ի՞նչ է պետական իշխանության լեգիտիմությունը: Ո՞րն է տարբերությունը լեգիտիմության և լեգալության միջև: Բնութագրե՛ք լեգիտիմության տիպերն ըստ Մ. Վեբերի:
13. Ի՞նչ է բյուրոկրատիզմը: Բնութագրե՛ք բյուրոկրատիայի վեբերյան ռացիոնալ հայեցակարգը և ժամանակակից մոտեցումները բյուրոկրատիզմի նկատմամբ:
14. Ո՞րն է տարբերությունը պետական մարմինների և պետական հիմնարկությունների ու ձեռնարկությունների միջև:

**Թեմա 8. Հասարակության քաղաքական համակարգը**

1. Ի՞նչ է հասարակության քաղաքական համակարգը: Թվարկե՛ք նրա կառուցվածքը (ինստիտուցիոնալ, նորմատիվ, հաղորդակցային, մշակութա-գաղափարախոսական և ֆունկցիոնալ ենթահամակարգեր):
2. Որո՞նք են հասարակության քաղաքական համակարգի գործառույթները:
3. Բնութագրե՛ք պետությունը որպես քաղաքական համակարգի կենտրոնական տարր: Ինչու՞ է պետությունը զբաղեցնում առանցքային տեղ քաղաքական համակարգում:

4. Ինչու՞ են դատարանները դիտարկվում որպես քաղաքական համակարգի սուբյեկտներ (իրավաքաղաքական ինստիտուտներ): Որո՞նք են դրանց առանձնահատկությունները օրենսդիր և գործադիր իշխանության համեմատությամբ:
5. Բնութագրե՛ք քաղաքական կուսակցությունները հասարակության քաղաքական համակարգում:
6. Բնութագրե՛ք հասարակական միավորումները (կազմակերպությունները) և արհեստակցական միությունները հասարակության քաղաքական համակարգում:
7. Ի՞նչ դեր է կատարում եկեղեցին (կրոնական կազմակերպությունները) քաղաքական համակարգում: Բնութագրե՛ք աշխարհիկ, կղերական և աստվածապետական պետությունը:
8. Բնութագրե՛ք տեղական ինքնակառավարման մարմինների տեղն ու դերը քաղաքական համակարգում:
9. Թվարկե՛ք ժամանակակից հասարակության քաղաքական համակարգի այլ մասնակիցներին (ներառյալ քաղաքացիներին, հանցավոր համագործակցություններին և այլն):
10. Ինչպե՞ս են դասակարգվում քաղաքական համակարգերը:

**Թեմա 9. Պետությունը, իրավունքը և տնտեսությունը**

1. Ի՞նչ է տնտեսական համակարգը: Թվարկե՛ք տնտեսական համակարգերի հիմնական տեսակները (պլանային, շուկայական, խառը): Ո՞րն է դրանց տարբերությունը:
2. Ինչպե՞ս են հարաբերակցվում պլանային և շուկայական տնտեսությունը իրավական կարգավորման հետ:
3. Ո՞րն է նեոլիբերալ տնտեսական մոդելի էությունը: Ինչպե՞ս է այն ազդում տնտեսական հարաբերությունների իրավական կարգավորման վրա:
4. Որո՞նք են պետության միջամտության սահմանները տնտեսության մեջ:
5. Ինչպե՞ս է իրավունքն ազդում պետության տնտեսական զարգացման վրա: Բերե՛ք օրինակներ:
6. Ի՞նչ է «իրավունք և տնտեսություն» (law and economics) ուսմունքը: Որո՞նք են դրա առարկան և մեթոդները:
7. Ո՞րն է իրավունքի տնտեսական վերլուծության էությունը: Ի՞նչ է նշանակում իրավական նորմերի արդյունավետությունը որպես դրանց գնահատման չափանիշ:
8. Ի՞նչ է խաղերի տեսությունը և ինչպե՞ս է այն կիրառվում իրավական կարգավորման մեջ:
9. Ի՞նչ է moral hazard-ը (անբարեխիղճ վարքագծի ռիսկ) և ինչպե՞ս կարող է իրավունքը հաղթահարել այն:
10. Ինչպե՞ս են հարաբերակցվում հրապարակային և մասնավոր իրավունքը տնտեսական հարաբերությունների կարգավորման գործում:

**Թեմա 10. Իրավական պետություն և քաղաքացիական հասարակություն**

1. Ի՞նչ է քաղաքացիական հասարակությունը: Թվարկե՛ք նրա կառուցվածքային տարրերն ու հատկանիշները:
2. Ինչպե՞ս է տեղի ունեցել իրավական պետության գաղափարի կայացումն ու զարգացումը:
3. Ի՞նչ է իրավական պետությունը: Թվարկե՛ք նրա բնորոշ գծերը:
4. Ո՞րն է տարբերությունը օրենքի գերակայության և իրավունքի գերակայության միջև:
5. Ի՞նչ է սոցիալական պետությունը: Թվարկե՛ք նրա բնորոշ գծերը:
6. Ինչպե՞ս են հարաբերակցվում իրավական և սոցիալական պետությունը:
7. Ինչպե՞ս են հարաբերակցվում պետությունը և քաղաքացիական հասարակությունը:

**Թեմա 11. Անձի իրավական կարգավիճակը**

1. Ի՞նչ է անձի իրավական կարգավիճակը: Թվարկե՛ք նրա կառուցվածքը:
2. Ինչպե՞ս են հարաբերակցվում «անձ», «մարդ», «քաղաքացի» հասկացությունները:
3. Թվարկե՛ք անձի իրավական կարգավիճակի տեսակները:
4. Ի՞նչ են մարդու հիմնական իրավունքներն ու ազատությունները: Ինչպե՞ս են հարաբերակցվում «մարդու» իրավունքները և «քաղաքացու» իրավունքները:
5. Ի՞նչ է *status negativus*-ը, *status positivus*-ը և *status activus*-ը: Բացահայտե՛ք հիմնական իրավունքների այս գործառույթներից յուրաքանչյուրի բովանդակությունը:
6. Իրավունքների ո՞ր սերունդներին և տեսակներին են վերաբերում *status negativus*-ը, *status positivus*-ը և *status activus*-ը:
7. Ինչպե՞ս են դասակարգվում մարդու իրավունքներն ու ազատությունները:
8. Ի՞նչ են սուբյեկտիվ և օբյեկտիվ իրավունքները մարդու իրավունքների համատեքստում:
9. Ո՞ր դեպքերում են հնարավոր մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակումները: Որո՞նք են սահմանափակումների իրավաչափության պայմանները:
10. Ի՞նչ է սուբյեկտիվ իրավունքից հրաժարումը: Որո՞նք են դրա իրավաչափության պայմանները: Թվարկե՛ք իրավունքից հրաժարման ձևերը:
11. Ի՞նչ է էստոպելի կանոնը: Բերե՛ք օրինակներ:
12. Թվարկե՛ք մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների երաշխիքները:

*4.3.2. Էսսեների, ռեֆերատների, վերլուծական աշխատանքների թեմաներ*

1. Պետական մարմինը որպես հրապարակային իրավունքի սուբյեկտ:
2. Պետությունը որպես հրապարակային իրավունքի իրավաբանական անձ՝ հասկացություն, հատկանիշներ, հարաբերակցությունը հրապարակային իրավունքի այլ սուբյեկտների հետ:

3. «Պետական մարմին», «սահմանադրական մարմին» և «Սահմանադրությամբ նախատեսված մարմին» հասկացությունների հարաբերակցությունը (Հայաստանի Հանրապետության Սահմանադրության օրինակով):
4. «Պետական մարմինը ստեղծվում է օրենքի հիման վրա» պայմանը՝ էությունը, նպատակը և իրավական նշանակությունը:
5. Օրենքով սահմանված կարգի խախտմամբ ընդհանուր իրավասության հանրապետական պետական մարմին ստեղծելու հիմնախնդիրը (հիպոթետիկ վերլուծություն):
6. Հասարակության քաղաքական համակարգի հիմնական տարրերը:
7. Պետությունը և եկեղեցին՝ փոխհարաբերությունների ձևերը:
8. Իրավական պետության գաղափարի կայացումը և զարգացումը:
9. Իրավական պետությունում պետական իշխանության ինքնասահմանափակումը:
10. Քաղաքացիական հասարակություն՝ հասկացություն և կառուցվածքային տարրեր:
11. Եկեղեցին որպես հրապարակային իրավունքի սուբյեկտ:
12. Պետական միջամտության սահմանները եկեղեցու ներքին գործերին:
13. Պետության և քաղաքացիական հասարակության հարաբերակցության հիմնախնդիրները:
14. Լիբերալ և սոցիալական պետությունների հարաբերակցության հիմնախնդիրները:
15. Սահմանադրական միապետության և խորհրդարանական հանրապետության հարաբերակցությունը:
16. Պետական կառուցվածքի հիմնախնդիրները:
17. Պետական ինքնիշխանության հիմնախնդիրը դաշնային պետությունում:
18. Ժամանակակից ռուսական պետության ձևը:
19. Ժամանակակից հայկական պետության ձևը:
20. Պետական իշխանության լեգալություն և լեգիտիմություն՝ հասկացություն, հարաբերակցություն և տարանջատման հիմնախնդիրներ:
21. Պետական իշխանության լեգիտիմությունը Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի՝ վստահության հարաքվե կազմակերպելու առաջարկի համատեքստում (ՀՀ ՍԴ թիվ ՍԴՈ-412 որոշման վերլուծություն):
22. Քաղաքական իշխանության ինքնասահմանադրականացման հիմնախնդիրը և պետական ինստիտուտների լեգիտիմությունը ժամանակակից իրավունքում:
23. Խարիզմատիկ լեգիտիմություն՝ հասկացություն և առանձնահատկություններ:
24. Պետական իշխանության լեգիտիմության հիմնախնդիրները սահմանադրական ճգնաժամերի պայմաններում:
25. Հանրաքվեի ինստիտուտը որպես ուղղակի ժողովրդավարության ձև և նրա դերը պետական իշխանության լեգիտիմության ապահովման գործում:
26. Պետության տարածքի փոփոխության հիմնախնդիրը և դրա արտացոլումը սահմանադրական օրենսդրությունում (Հայաստանի Հանրապետության օրինակով):

27. Պլանային և շուկայական տնտեսություն՝ համեմատաիրավական վերլուծություն:
28. Տնտեսության պետական կարգավորումը՝ միջամտության սահմաններն ու ձևերը:
29. Իրավունքի ազդեցությունը տնտեսական զարգացման վրա՝ սեփականության իրավունքների պաշտպանություն և պայմանագրային ազատություն:
30. «Իրավունք և տնտեսություն» (law and economics) ուսմունքը՝ առարկա, մեթոդներ և գործնական նշանակություն:
31. Իրավունքի տնտեսական վերլուծությունը՝ իրավական նորմերի արդյունավետությունը որպես դրանց գնահատման չափանիշ:
32. Խաղերի տեսությունը և դրա կիրառումը տնտեսական հարաբերությունների իրավական կարգավորման մեջ:
33. Moral hazard-ի (անբարեխիղճ վարքագծի ռիսկի) հիմնախնդիրը և դրա հաղթահարման իրավական միջոցները:
34. Հրապարակային և մասնավոր իրավունքի հարաբերակցությունը տնտեսական հարաբերությունների կարգավորման գործում:
35. Ձեռնարկատիրական գործունեության իրավական կարգավորումը շուկայական տնտեսության պայմաններում:

*4.3.3. Սպուգարքի օրինակելի հարցեր (տոմս)*

**Վերլուծական հարցի օրինակ թիվ 1**

Բացահայտե՛ք «պետության գործառույթներ» հասկացությունը: Բնութագրե՛ք պետության գործառույթների դասակարգումը տարբեր հիմքերով (ըստ գործունեության ոլորտի, ըստ գործողության տևողության, ըստ սոցիալական նշանակության): Կոնկրետ օրինակներով ցույց տվե՛ք պետության գործառույթների և առանձին պետական մարմինների գործառույթների հարաբերակցությունը:

---

**Վերլուծական հարցի օրինակ թիվ 2**

Բացահայտե՛ք «պետության ձև» հասկացությունը: Բնութագրե՛ք նրա կառուցվածքային տարրերը (կառավարման ձև, պետական կառուցվածքի ձև, քաղաքական ռեժիմ): Կոնկրետ օրինակներով ցույց տվե՛ք այդ տարրերի փոխկապակցվածությունը:

---

**Վերլուծական հարցի օրինակ թիվ 3**

Բացահայտե՛ք «պետական իշխանության լեգիտիմություն» հասկացությունը: Բնութագրե՛ք լեգիտիմության հիմնական տիպերն ըստ Մ. Վեբերի (ավանդական, խարիզմատիկ, ռացիոնալ-լեգալ): Կոնկրետ օրինակներով ցույց տվե՛ք պետական իշխանության լեգալության և լեգիտիմության հարաբերակցությունը:

---

**Վերլուծական հարցի օրինակ թիվ 4**

Բացահայտե՛ք «պետության մեխանիզմ» հասկացությունը: Բնութագրե՛ք նրա կառուցվածքը և պետական ապարատի կազմակերպման ու գործունեության սկզբունքները: Կոնկրետ օրինակներով ցույց տվե՛ք պետական մարմնի և պետական հիմնարկության ու ձեռնարկության տարբերությունը:

---

**Վերլուծական հարցի օրինակ թիվ 5**

Բացահայտե՛ք «հասարակության քաղաքական համակարգ» հասկացությունը: Բնութագրե՛ք նրա կառուցվածքը (ինստիտուցիոնալ, նորմատիվ, ֆունկցիոնալ, գաղափարախոսական ենթահամակարգեր): Ցույց տվե՛ք պետության տեղն ու դերը հասարակության քաղաքական համակարգում:

---

**Վերլուծական հարցի օրինակ թիվ 6**

Բացահայտե՛ք «քաղաքացիական հասարակություն» հասկացությունը: Բնութագրե՛ք նրա կառուցվածքային տարրերն ու հատկանիշները: Ցույց տվե՛ք պետության և քաղաքացիական հասարակության հարաբերակցությունը: Ո՞րն է տարբերությունը իրավական և սոցիալական պետության միջև:

---

**Իրավիճակային խնդրի օրինակ թիվ 1**

**Խնդրի պայմանը.**

«Ալֆա» պետությունում գործում է բարձրագույն իշխանության մարմինների ձևավորման հետևյալ կարգը.

1. Պետության ղեկավարն ընտրվում է Խորհրդարանի կողմից՝ նրա անդամների համատեղ նիստում: Ընտրություններին մասնակցում են յուրաքանչյուր մարզից երեք պատգամավորներ, որոնք ընտրվում են մարզային խորհրդի կողմից՝ փոքրամասնության ներկայացուցչությունն ապահովելով: Պետության ղեկավարի ընտրությունը կատարվում է գաղտնի քվեարկությամբ՝ նիստի երկու երրորդի մեծամասնությամբ:
2. Պետության ղեկավար կարող է ընտրվել ցանկացած քաղաքացի, որը լրացել է հիսուն տարեկանը և օգտվում է քաղաքացիական և քաղաքական իրավունքներից: Պետության ղեկավարի պաշտոնն անհամատեղելի է որևէ այլ պաշտոնի հետ:
3. Պետության ղեկավարը պատասխանատվություն չի կրում իր գործառույթների իրականացման ընթացքում կատարված գործողությունների համար, բացառությամբ պետական դավաճանության կամ Սահմանադրության վրա ոտնձգության: Նման դեպքերում նա ենթարկվում է դատարանի Խորհրդարանի կողմից՝ պալատների համատեղ նիստում նրա անդամների բացարձակ մեծամասնության քվեներով:
4. Կառավարությունը բաղկացած է Նախագահից և նախարարներից, որոնք միասին կազմում են Նախարարների խորհուրդը: Պետության ղեկավարը նշանակում է Նախարարների խորհրդի նախագահին և, վերջինիս առաջարկությամբ, նախարարներին:
5. Կառավարությունը պետք է ստանա երկու պալատների վստահությունը: Յուրաքանչյուր պալատ վստահություն է հայտնում կամ մերժում այն

պատճառաբանված բանաձևով, որն ընդունվում է անվանական քվեարկությամբ: Կառավարության ձևավորումից ոչ ուշ, քան տասը օր հետո, այն ներկայացվում է պալատներին վստահություն ստանալու համար:

**Հարց.** Որոշե՛ք տվյալ պետության կառավարման ձևը և դրա տեսակը: Պատասխանը հիմնավորե՛ք՝ կառավարման ձևերի դասակարգման էական չափանիշները խնդրի պայմանների հետ հաջորդաբար համեմատելով:

---

**Իրավիճակային խնդրի օրինակ թիվ 2**

**Խնդրի պայմանը.**

«Բետա» պետությունում ընդունվել է Սահմանադրություն, համաձայն որի.

1. Պետության ղեկավարը Նախագահն է, որն ընտրվում է բնակչության կողմից 5 տարի ժամկետով:
2. Նախագահը Գերագույն գլխավոր հրամանատարն է, ներկայացնում է պետությունը միջազգային հարաբերություններում, Խորհրդարանի համաձայնությամբ նշանակում է Կառավարության նախագահին:
3. Կառավարությունը ձևավորվում է Նախագահի կողմից և պատասխանատու է Նախագահի առջև:
4. Խորհրդարանն ընդունում է օրենքներ, հաստատում է բյուջեն, իրականացնում է վերահսկողություն Կառավարության գործունեության նկատմամբ:
5. Նախագահը կարող է արձակել Խորհրդարանը Կառավարության նկատմամբ անվստահություն հայտնելու դեպքում, սակայն ոչ շուտ, քան նրա ընտրվելուց մեկ տարի հետո:
6. Նախագահն օժտված է Խորհրդարանի կողմից ընդունվող օրենքների նկատմամբ վետոյի իրավունքով:

**Հարց.** Որոշե՛ք տվյալ պետության կառավարման ձևը և դրա տեսակը: Պատասխանը հիմնավորե՛ք:

---

**Իրավիճակային խնդրի օրինակ թիվ 3**

**Խնդրի պայմանը.**

«Ա» պետական կազմակերպությունը գրանցված է սահմանված կարգով, ունի սեփական հաշիվ, նրա Կանոնադրությամբ նախատեսված է բնակչությանը անվճար սոցիալական ծառայությունների մատուցում: Կազմակերպության վարչակազմն ընդունում է ակտեր, որոնք պարտադիր ուժ ունեն աշխատակիցների նկատմամբ:

**Հարցեր.**

1. Ինչո՞վ են պետական հիմնարկություններն ու ձեռնարկությունները տարբերվում պետական մարմիններից:
2. Պետական կազմակերպությունների ո՞ր տեսակին կարելի է դասել տվյալ կազմակերպությունը՝ ձեռնարկությունների՞, հիմնարկությունների՞, թե՞ մարմինների:

---

**Իրավիճակային խնդրի օրինակ թիվ 4**

**Խնդրի պայմանը.**

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 205-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության տարածքի փոփոխության վերաբերյալ հարցերը լուծվում են հանրաքվեների միջոցով»:

**Հարցեր.**

1. Բացատրե՛ք «պետության տարածք» հասկացությունը և դրա ծավալը:
2. Մեկնաբանե՛ք ՀՀ Սահմանադրության 205-րդ հոդվածի իմաստով «Հայաստանի Հանրապետության տարածքի փոփոխություն» հասկացությունը և նշե՛ք կոնկրետ իրավիճակներ, որոնք կարող են դիտվել որպես ՀՀ տարածքի փոփոխություն:

---

**Իրավիճակային խնդրի օրինակ թիվ 5**

**Խնդրի պայմանը.**

Պետության և իրավունքի տեսության դասագրքերում նշվում է. «Պետական մարմինները ձևավորվում են օրենքով սահմանված կարգով»:

**Հարցեր.**

1. Բացատրե՛ք «պետական մարմինը կարող է ստեղծվել օրենքով սահմանված կարգով» պայմանի էությունը և դրա նպատակը:
2. Բերե՛ք հիպոթետիկ իրավիճակ, երբ ընդհանուր իրավասության հանրապետական պետական մարմինը ստեղծվում է նշված պայմանի խախտմամբ:
3. Բացատրե՛ք, թե Ձեր օրինակում ինչու կամ ինչ հիմքով եք որակել այդ պետական մարմինը որպես ընդհանուր իրավասության մարմին:
4. Բացատրե՛ք, թե Ձեր օրինակում ինչու կամ ինչ հիմքով եք որակել այդ պետական մարմինը որպես հանրապետական մարմին:

### *4.4. Մեթոդական նյութեր, որոնք սահմանում են գնահատման ընթացակարգերը*

#### *4.4.1. Գիտելիքների ընթացիկ հսկողության ձևերը*

Սեմինար պարապմունքները ներառում են տեսական հարցերի բանավոր քննարկում: Գնահատվում են ընկալման խորությունը, փաստարկելու կարողությունը, տերմինաբանությանը տիրապետելը:

Ուսանողից կարող է պահանջվել ներկայացնելու էսսեներ կամ ռեֆերատ: Ծավալը՝ 5–7 էջ: Գնահատվում են վերլուծության ինքնուրույնությունը, դոկտրինի օգտագործումը, ձևավորումը:

#### *4.4.2. Ատեստավորման ձևը (ստուգարք, քննություն)*

Ստուգարքը (քննությունը) անցկացվում է գրավոր ձևաչափով: Տոմսի կառուցվածքը ներառում է մեկ վերլուծական հարց և մեկ իրավիճակային խնդիր: Կատարման ժամանակը 60 րոպե է: Ուսանողներին չի տրամադրվում լրացուցիչ նյութեր, սակայն դասախոսի հայեցողությամբ թույլատրվում է օգտագործել նորմատիվ ակտերի տեքստեր:

*4.4.3. Գնահատման ընթացակարգը*

Յուրաքանչյուր պատասխան գնահատվում է 0–100 միավոր սանդղակով՝ հետագա փոխարկմամբ 7-բալյա համակարգի: 88–100 միավորի դեպքում տրվում է A (գերազանց), 76–87-ի դեպքում՝ B (շատ լավ), 64–75-ի դեպքում՝ C (լավ), 52–63-ի դեպքում՝ D (բավարար), 40–51-ի դեպքում՝ E (բավարար սահմանային), 20–39-ի դեպքում՝ FX (անբավարար), իսկ 0–19-ի դեպքում՝ F (անբավարար):

Միավորների բաշխումը տոմսում կատարվում է հետևյալ կերպ. վերլուծական հարցը գնահատվում է մինչև 40 միավոր, իսկ իրավիճակային խնդիրը՝ մինչև 60 միավոր: Նշված բաշխումը կարող է փոփոխվել՝ կախված հարցերի բարդությունից:

*4.4.4. Գնահատման չափանիշներ*

Գնահատելիս հատկապես հաշվի են առնվում պատասխանի վերլուծական բնույթը (այլ ոչ թե սահմանումների պարզ թվարկումը), իրավական փաստարկման առկայությունը (ինչու է տվյալ մոտեցումը ճիշտ), կոնկրետությունը (հղումներ նորմատիվ ակտերին, դոկտրինալ դիրքորոշումներին, օրինակներին), ինչպես նաև կառուցվածքայնությունը (ներածություն, հիմնական մաս, եզրակացություն յուրաքանչյուր ենթակետի համար):

*4.4.5. Ուսանողների նախապատրաստման առաջարկություններ*

Սեմինար պարապմունքների համար անհրաժեշտ է մշակել լրացուցիչ ուսումնական կամ դոկտրինալ աղբյուրներ յուրաքանչյուր թեմայի վերաբերյալ:

Իրավիճակային խնդիրը լուծելիս պետք է հաջորդաբար կիրառել հետևյալ սխեման. փաստեր → իրավական խնդիր → նորմ/դոկտրին → փաստարկում → եզրակացություն:

Ստուգարքի (քննության) ժամանակ խորհուրդ է տրվում հստակ կառուցել պատասխանը՝ ներածություն, հիմնական մաս, եզրակացություն, ճիշտ օգտագործել իրավական տերմինաբանությունը, անհրաժեշտության դեպքում հղումներ կատարել ՀՀ Սահմանադրությանը և ՀՀ օրենքներին, ինչպես նաև հիմնավորել իր դիրքորոշումը՝ հղումներով դոկտրինալ մոտեցումներին: